ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

10 սեպտեմբերի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 23 անդամներ:

Բացակա էին՝ Հերմոն Ավետիսյանը, Սամվել Գյուլամիրյանը, Սեդրակ Սարգսյանը, Արմեն Եփրեմյանը, Վարդան Խաչատրյանը, Անդրանիկ Կիրակոսյանը, Արաքսյա Համբարձումյանը, Հովիկ Հովակիմյանը, Սոկրատ Հովսեփյանը, Իշխան Սահակյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Հրայր Հակոբջանյան, Սուրեն Մկրտչյան, Հրաչյա Հովհաննիսյան, Խորեն Ուստյան, Ատոմ Ատոմյան, Գոհար Հովսեփյան, Մերի Մելիքյան, Անահիտ Խաչատրյան, Նուշիկ Պետրոսյան, Արսեն Եփրեմյան, Նարեկ Գալստյան, Խորեն Հովակիմյան, Ահարոն Հակոբյան, Սարգիս Գրիգորյան, Արմեն Ալեքսանյան, Արգիշտի Վարդանյան, Սմբատ Աղազարյան, Կամո Հարությունյան, Ատոմ Թադևոսյան, Լիանա Սայադյան, Սուրեն Սրապոյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գոռ Նազարյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի 2025 թվականի սեպտեմբերի 10-ի առաջին հերթական նիստի օրակարգը՝

1.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.2 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՒՇԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ/

1.3 «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.4 ՏԻԳՐԱՆ ԴԱՎԻԹ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.5 ՆԱՐԵ ԷՄԻՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՍԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.7 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.8 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.9 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ ՆԵՐՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒ ԲԱՑՄԱՆԸ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ ԵՎ ԴԻՏԱԿ-ՋՐԱՇԵՆ-ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ԵՐԹՈՒՂՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.10 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 12,22547 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.11 ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ՝ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.12 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ԳՅՈՒՂԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ 13/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.13 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՐԵՎԱՆ-ԵՐԱՍԽ ՄԱՅՐՈՒՂԻ 29-30 ԿՄ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.14 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՐԵՎԱՆ-ԵՐԱՍԽ ՄԱՅՐՈՒՂԻ 16-17ԿՄ 52 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.15 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆ-ԵՐԱՍԽ ՄԱՅՐՈՒՂԻ 20-22ԿՄ 48 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.16 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑ 156 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.17 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ

Կ. ՄԱՐՔՍԻ ՓՈՂՈՑ 18/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.18 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.19 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂԻ Վ. ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑ 43/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,0794 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 90-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.20 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԻ Ս.ԿԻՐՈՎԻ ՓՈՂՈՑ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.21 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԼԱՅԵՐՏ ՄՀԵՐԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.22 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԱՐԱՏ ՎԱՐԴԱՆԻ ՍԱՅԱԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.23 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.24 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.25 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՄԵՆ ԱԼԵՔՍԱՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.26 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 172-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջով՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխությունները.

1) 46.07.00 գործառական դասակարգման (համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների վարձավճարներ) «Արտաշատ համայնքի Դիմիտրով գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծնողական վարձավճարների գանձապետական եկամտային 900415003103 հաշիվը ավելացնել 720 000 (յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամով.

2) 46.07.00 գործառական դասակարգման (համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների վարձավճարներ) «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Պարույր Սևակի անվան թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-

ի ծնողական վարձավճարների գանձապետական եկամտային 900415003137 հաշիվը պակասեցնել 12 000 000 (տասներկու միլիոն) ՀՀ դրամով.

3) 01.01.01.51 գործառական դասակարգման (կառավարման մարմնի պահպանում) 5122 հոդվածը պակասեցնել 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամով.

4) 01.01.01.51 գործառական դասակարգման (կառավարման մարմնի պահպանում) 5129 հոդվածն ավելացնել 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամով.

5)05.01.01.51 գործառական դասակարգման (աղբահանություն, սանիտարական մաքրում) 5121 հոդվածը պակասեցնել 25 000 000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամով.

6)08.02.03.51 գործառական դասակարգման (մշակութային օբյեկտների շինարարություն) 5113 հոդվածը պակասեցնել 200 000 000 (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամով.

7)09.06.01.51 գործառնական դասակարգման (նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում) 5113 հոդվածը պակասեցնել 26 500 000 (քսանվեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամով.

8)09.06.01.51 գործառական դասակարգման (նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում) 5112 հոդվածն ավելացնել 158 000 000 (մեկ հարյուր հիսունութ միլիոն) ՀՀ դրամով.

9) 08.01.01.52 գործառական դասակարգման (հանգստի գոտիների, զբոսայգիների կառուցում) 5129 հոդվածն ավելացնել 93 500 000 (իննսուներեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամով.

10)11.01.02.51 գործառական դասակարգման (վարչական բյուջեի պահուստային ֆոնդ) 4891 հոդվածը պակասեցնել 91 080 000 (իննսունմեկ միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամով.

11)01.03.03.55 գործառական դասակարգման (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) 4239 հոդվածն ավելացնել 1 800 000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամով.

12)01.01.01.51 գործառական դասակարգման (կառավարման մարմնի պահպանում) 4264 հոդվածը պակասեցնել 16 000 000 (տասնվեց միլիոն) ՀՀ դրամով.

13)05.02.01.55 գործառական դասակարգման (կեղտաջրերի հեռացում) 4213 հոդվածը պակասեցնել 15 000 000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամով.

14)01.01.01.52 գործառական դասակարգման (վարչական օբյեկտների հիմնանորոգում) 4251 հոդվածը պակասեցնել 8 000 000 (ութ միլիոն) ՀՀ դրամով.

15)06.06.01.51 գործառական դասակարգման (ջրային կառույցների շահագործում) 4251 հոդվածը պակասեցնել 15 000 000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամով.

16)06.06.01.54 գործառական դասակարգման (բազմաբնակարան բնակելի շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ) 4251 հոդվածը պակասեցնել 8 000 000(ութ միլիոն) ՀՀ դրամով.

17)05.06.01.55 գործառական դասակարգման (թափառող կենդանիների վնասազերծում) 4239 հոդվածը պակասեցնել 8 000 000 (ութ միլիոն) ՀՀ դրամով.

18)10.07.01.54 գործառական դասակարգման (սոցիալապես անապահով անձանց աջակցություն) 4729 հոդվածը պակասեցնել 25 000 000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամով.

19)10.07.01.54 գործառական դասակարգման (սոցիալապես անապահով անձանց աջակցություն) 4267 հոդվածը պակասեցնել 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամով.

20)09.06.01.51 գործառական դասակարգման (նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում) 4251 հոդվածը պակասեցնել 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամով.

21)09.05.01.52 գործառական դասակարգման (արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում) 4251 հոդվածը պակասեցնել 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամով.

22)08.02.03.51 գործառական դասակարգման (մշակութային օբյեկտների շինարարություն) 4251 հոդվածը պակասեցնել 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամով.

23)09.01.01.51 գործառական դասակարգման (նախադպրոցական ուսուցում) «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Պարույր Սևակի անվան թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածը պակասեցնել 29 603 000 (քսանինը միլիոն վեց հարյուր երեք հազար) ՀՀ դրամով.

24)08.02.04.51 գործառական դասակարգման (մշակութային միջոցառումների իրականացում) 4239 հոդվածն ավելացնել 140 000 000 (մեկ հարյուր քառասուն միլիոն) ՀՀ դրամով.

25)08.02.04.51 գործառական դասակարգման (մշակութային միջոցառումների իրականացում) 4216 հոդվածն ավելացնել 60 000 000 (վաթսուն միլիոն) ՀՀ դրամով.

26)09.01.01.51 գործառական դասակարգման (նախադպրոցական ուսուցում) «Արտաշատ համայնքի Դիմիտրով գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածն ավելացնել 17 603 000 (տասնյոթ միլիոն վեց հարյուր երեք հազար) ՀՀ դրամով.

2.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N392-Ն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4–րդ հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 173-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆՈՒՇԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Արխիվային գործի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. 1996 թվականից մինչև 2022 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Արտաշատ համայնքի սեփականություն համարվող սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ ենթակետերով նշված արխիվային փաստաթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:

1) Արտաշատ համայնքի Ջրաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Ջրաշենի համայնքապետարանի 1997-2022թթ. արխիվային փաստաթղթեր.

2) Արտաշատ համայնքի Բյուրավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Բյուրավանի համայնքապետարանի 2009-2022թթ. արխիվային փաստաթղթեր.

3) Արտաշատ համայնքի Բարձրաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Բարձրաշենի համայնքապետարանի 1996-2022թթ. արխիվային փաստաթղթեր.

4) Արտաշատ համայնքի Նշավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Նշավանի համայնքապետարանի 1996-2022թթ. արխիվային փաստաթղթեր.

5) Արտաշատ համայնքի Արևշատ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Արևշատի համայնքապետարանի 2014-2022թթ. արխիվային փաստաթղթեր.

6) Արտաշատ համայնքի Կանաչուտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Կանաչուտի համայնքապետարանի 1996-2021թթ. արխիվային փաստաթղթեր.

7) Արտաշատ համայնքի Մրգավետ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Մրգավետի համայնքապետարանի 1996-2021թթ. արխիվային փաստաթղթեր.

8) Արտաշատ համայնքի Լանջազատ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Լանջազատի համայնքապետարանի 2016-2022թթ. արխիվային փաստաթղթեր:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 174-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ մասով, 102-րդ հոդվածով և հաշվի առնելով «Արտաշատ համայնքի Դիմիտրով գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շինարարական աշխատանքների ավարտը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. 2025 թվականի հոկտեմբերի 15-ից սկսել «Արտաշատ համայնքի Դիմիտրով գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատանքները:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 175-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԻԹ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.«Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սան Տիգրան Դավիթ Մանուկյանի (ծնված 06.05.2022 թվականին) նկատմամբ սահմանել տեղական վճարների գծով արտոնություն՝ զրոյական դրույքաչափի կիրառմամբ՝ 2025 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դպրոց հաճախելը:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 176-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՆԱՐԵ ԷՄԻՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.«Արտաշատ համայնքի Բաղրամյան գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սան Նարե Էմին Սարգսյանի (ծնված 26.06.2021 թվականին) նկատմամբ սահմանել տեղական վճարների գծով արտոնություն՝ զրոյական դրույքաչափի կիրառմամբ՝ 2025 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դպրոց հաճախելը:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 177-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՍԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող մի շարք սաների նկատմամբ սահմանել տեղական վճարների գծով արտոնություն՝ զրոյական դրույքաչափի կիրառմամբ՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ համաձայն հավելվածի:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և տարածվում 2025 թվականի օգոստոսի 20-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 178-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻԺՈՒ՝» ՍՊԸ-ի միջև 17.04.2025 թվականին կնքված ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/24-1 ծածկագրով պայմանագրի համաձայն գույքի ձեռքբերմամբ պայմանավորված՝ (բազմաֆունկցիոնալ տպիչ CANON MF 3010, քանակը՝ 95 հատ, գինը՝ 8.280.000 (ութ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի՝ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականության 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 342-Լ որոշման 12-րդ հավելվածում 1036-րդ տողի ավելացմամբ կատարված փոփոխությունը՝ Արտաշատ համայնքի կարիքների համար Արտաշատի համայնքապետարանի և «ԻՆՈ-ԹԵՔՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ի 17.04.2025 թվականին կնքված ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/24-1 ծածկագրով պայմանագրի համաձայն գույքի ձեռքբերմամբ պայմանավորված՝ (բազմաֆունկցիոնալ տպող սարք 2Z627A HP LJ PRO MFP 4103dw, քանակը՝ 5 հատ, գինը՝ 834.000 (ութ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:

3.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի՝ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականության 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 342-Լ որոշման 12-րդ հավելվածում 1037-1039-րդ տողերի ավելացմամբ կատարված փոփոխությունը՝ Արտաշատ համայնքի կարիքների համար Արտաշատի համայնքապետարանի և «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 21.04.2025 թվականին կնքված ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/24-1 ծածկագրով պայմանագրի համաձայն գույքի ձեռքբերմամբ պայմանավորված՝ (համակարգչային մոնիտոր, քանակը՝ 95 հատ, գինը՝ 3.972.000 (երեք միլիոն ինը հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ, (համակարգչային մոնիտոր, քանակը՝ 7 հատ, գինը՝ 491.950 (չորս հարյուր իննսունմեկ հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ, (սնուցման բլոկ, քանակը՝ 130 հատ, գինը՝ 4.886.004 (չորս միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար չորս) ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 180-Լ)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ ՆԵՐՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒ ԲԱՑՄԱՆԸ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ ԵՎ ԴԻՏԱԿ-ՋՐԱՇԵՆ-ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ԵՐԹՈՒՂՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, 35-րդ և 44-րդ հոդվածներով և հաշվի առնելով ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Ջրաշեն բնակավայրի վարչական ղեկավարի 02.09.2025 թվականի թիվ Ա-11348 գրությունը և Արտաշատ քաղաքի Արազի 35/21 հասցեի

բնակիչ Շողիկ Ռուշանյանի 2025 թվականի սեպտեմբերի 03-ի թիվ Ք-11416 դիմումը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Ելնելով խնդրի կարևորությունից և հրատապությունից՝ տալ համաձայնություն Արտաշատ համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով, անհրաժեշտության դեպքում նաև համայնքի միջոցների ներգրավմամբ՝

1) Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքում ներքաղաքային երթուղու բացմանը և շահագործմանը (հնարավորության դեպքում նաև անվճար հիմունքներով).

2) Դիտակ-Ջրաշեն–Նուբարաշեն երթուղով ուղևորափոխադրման աշխատանքների կազմակերպմանը:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 181-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 12,22547 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի Բարձրաշեն գյուղում գտնվող, Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, 03-023-0101-0047 կադաստրային ծածկագրով 12,22547 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը (10,404929 հա՝ գյուղատնտեսական այլ, 1,820541 հա՝ վարելահող) գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, մրցութային եղանակով, վարձակալության իրավունքով տրամադրել օգտագործման:

2. Վճարի մեկնարկային չափ սահմանել տարեկան 360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

3. Հողամասի վարձակալության ժամկետը սահմանել 25 (քանհինգ) տարի:

4.Մրցույթի գործընթացըկազմակերպելմեկ տարվա ընթացքում:

5. Որոշումնուժիմեջէմտնումհրապարակմանըհաջորդողօրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 182-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ՝ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի՝ «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման 39-րդ կետի 1-ին ենթակետը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Քարտեզագրման սխալի հետևանքով որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված՝ Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքում գտնվող, 03-001-0693-0052 կադաստարային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականության սուբյեկտի սխալն ուղղել որպես Արտաշատ համայնքի սեփականություն:

2. Քարտեզագրման սխալի հետևանքով որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված՝ Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքում գտնվող, 03-001-0693-0053 կադաստարային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականության սուբյեկտի սխալն ուղղել որպես Արտաշատ համայնքի սեփականություն:

3. Կատարել համապատասխան փոփոխություն համայնքի հողային հաշվեկշռում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 183-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ԳՅՈՒՂԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ 13/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Բերքանուշ գյուղի Ե. Չարենցի փողոց 13/1 հասցեում գտնվող,

03-025-0019-0029 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը մանկապարտեզ կառուցելու համար:

2.Ընդունել ի գիտություն, որ Արտաշատ համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 18-ի N 2839-Ա որոշմամբ տրամադրվել է Ք/Թ/220/96-25 քանդման թույլտվությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի 596-Ն որոշմամբ սահմանված կարգով դեռևս չի ներկայացվել 2-5 ձևանմուշի տեղեկանքը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 184-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՐԵՎԱՆ-ԵՐԱՍԽ ՄԱՅՐՈՒՂԻ 29-30 ԿՄ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի 02/09/2025թ. Ե-186 գրությամբ ներկայացված գնահատման հաշվետվությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Շահումյան գյուղի Երևան-Երասխ մայրուղի 29-30 կմ, 14 հասցեում գտնվող հողամասը՝

լոտ 1- ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Շահումյան գյուղի Երևան-Երասխ մայրուղի 29-30 կմ, 14 հասցեում գտնվող՝ 03-074-0233-0013 կադաստրային ծածկագրով, 0.2524 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս:

2.Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 74 572 000 /յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր յոթանասուներկու հազար/ ՀՀ դրամ:

3.Առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպել նոր աճուրդներ՝ յուրաքանչյուր հերթական աճուրդի ժամանակ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով վերջին աճուրդի մեկնարկային գնի 15 տոկոսի չափով, բայց ոչ պակաս քան գույքի գնահատված շուկայական արժեքի 50 տոկոսը: Գույքի կադաստրային արժեքը գնահատված արժեքի 50 տոկոսից բարձրանալու դեպքում՝ պետք է լինի ոչ պակաս, քան գույքի կադաստրային արժեքի 100 տոկոսը:

4. Սահմանել, որ հողամասի աճուրդի մասնակից չլինելու հիմքով չկայանալու դեպքում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածի ուժով ենթակա են կիրառման «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի դրույթները:

5.Աճուրդն անցկացնել բաց դասական եղանակով:

6.Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 185-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՐԵՎԱՆ-ԵՐԱՍԽ ՄԱՅՐՈՒՂԻ 16-17ԿՄ 52 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի 02/09/2025թ. Ե-186 գրությամբ ներկայացված գնահատման հաշվետվությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Ազատավան գյուղի Երևան-Երասխ մայրուղի 16-17կմ, 52 հասցեում գտնվող հողամասը՝

լոտ 1- ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Ազատավան գյուղի Երևան-Երասխ մայրուղի 16-17կմ, 52 հասցեում գտնվող՝ 03-007-0208-0017 կադաստրային ծածկագրով, 0,26հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս:

2.Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 92 019 000 /իննսուներկու միլիոն տասնինը հազար / ՀՀ դրամ:

3.Առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպել նոր աճուրդներ՝ յուրաքանչյուր հերթական աճուրդի ժամանակ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով վերջին աճուրդի մեկնարկային գնի 15 տոկոսի չափով, բայց ոչ պակաս քան գույքի գնահատված շուկայական արժեքի 50 տոկոսը: Գույքի կադաստրային արժեքը գնահատված արժեքի 50 տոկոսից բարձրանալու դեպքում՝ պետք է լինի ոչ պակաս, քան գույքի կադաստրային արժեքի 100 տոկոսը:

4. Սահմանել, որ հողամասի աճուրդի մասնակից չլինելու հիմքով չկայանալու դեպքում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածի ուժով ենթակա են կիրառման «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի դրույթները՝ սույն որոշման 2-րդ կետում նշված մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի դեպքում նվազեցնելով 15 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 50 տոկոսից:

5.Աճուրդն անցկացնել բաց դասական եղանակով:

6.Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 186-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆ-ԵՐԱՍԽ ՄԱՅՐՈՒՂԻ 20-22ԿՄ 48 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի 02/09/2025թ. Ե-186 գրությամբ ներկայացված գնահատման հաշվետվությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Երևան-Երասխ մայրուղի 20-22կմ, 48 հասցեում գտնվող հողամասը՝

լոտ 1- ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Երևան-Երասխ մայրուղի 20-22կմ, 48 հասցեում գտնվող՝ 03-001-0072-0490 կադաստրային ծածկագրով, 0.0212 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս:

2.Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 18 056 000 /տասնութ միլիոն հիսունվեց հազար / ՀՀ դրամ:

3.Առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպել նոր աճուրդներ՝ յուրաքանչյուր հերթական աճուրդի ժամանակ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով վերջին աճուրդի մեկնարկային գնի 15 տոկոսի չափով, բայց ոչ պակաս քան գույքի գնահատված շուկայական արժեքի 50 տոկոսը: Գույքի կադաստրային արժեքը գնահատված արժեքի 50 տոկոսից

բարձրանալու դեպքում՝ պետք է լինի ոչ պակաս, քան գույքի կադաստրային արժեքի 100 տոկոսը:

4. Սահմանել, որ հողամասի աճուրդի մասնակից չլինելու հիմքով չկայանալու դեպքում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածի ուժով ենթակա են կիրառման «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի դրույթները՝սույն որոշման 2-րդ կետում նշված մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի դեպքում նվազեցնելով 15 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 50 տոկոսից:

5.Աճուրդն անցկացնել բաց դասական եղանակով:

6.Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 187-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑ 156 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի 02/09/2025թ. Ե-186 գրությամբ ներկայացված գնահատման հաշվետվությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Ս. Հակոբյան փողոց 156 հասցեում գտնվող հողամասը՝

լոտ 1- ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Ս. Հակոբյան փողոց 156 հասցեում գտնվող՝ 03-001-0200-0044 կադաստրային ծածկագրով, 0.44 հա մակերեսով բնակավայրերի խառը կառուցապատման հողամաս:

2.Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 310 957 000 /երեք հարյուր տասը միլիոն ինները հարյուր հիսունյոթ հազար / ՀՀ դրամ:

3.Առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպել նոր աճուրդներ՝ յուրաքանչյուր հերթական աճուրդի ժամանակ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով վերջին աճուրդի մեկնարկային գնի 15

տոկոսի չափով, բայց ոչ պակաս քան գույքի գնահատված շուկայական արժեքի 50 տոկոսը: Գույքի կադաստրային արժեքը գնահատված արժեքի 50 տոկոսից բարձրանալու դեպքում՝ պետք է լինի ոչ պակաս, քան գույքի կադաստրային արժեքի 100 տոկոսը:

4. Սահմանել, որ հողամասի աճուրդի մասնակից չլինելու հիմքով չկայանալու դեպքում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածի ուժով ենթակա են կիրառման «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի դրույթները:

5.Աճուրդն անցկացնել բաց դասական եղանակով:

6.Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 188-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Կ. ՄԱՐՔՍԻ ՓՈՂՈՑ 18/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի 02/09/2025թ. Ե-186 գրությամբ ներկայացված գնահատման հաշվետվությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Կ. Մարքսի փողոց 18/6 հասցեում գտնվող հողամասը՝

լոտ 1- ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Կ. Մարքսի փողոց 18/6 հասցեում գտնվող՝ 03-001-0057-0303 կադաստրային ծածկագրով, 0.0152 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս:

2.Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 12746 000 /տասներկու միլիոն յոթ հարյուր քառասունվեց հազար/ ՀՀ դրամ:

3.Առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպել նոր աճուրդներ՝ յուրաքանչյուր հերթական աճուրդի ժամանակ գույքի

վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով վերջին աճուրդի մեկնարկային գնի 15 տոկոսի չափով, բայց ոչ պակաս քան գույքի գնահատված շուկայական արժեքի 50 տոկոսը: Գույքի կադաստրային արժեքը գնահատված արժեքի 50 տոկոսից բարձրանալու դեպքում՝ պետք է լինի ոչ պակաս, քան գույքի կադաստրային արժեքի 100 տոկոսը:

4. Սահմանել, որ հողամասի աճուրդի մասնակից չլինելու հիմքով չկայանալու դեպքում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածի ուժով ենթակա են կիրառման «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի դրույթները:

5.Աճուրդն անցկացնել բաց դասական եղանակով:

6.Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 189-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի»՝ 2025 թվականի հունիսի 17-ի N 3 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2025 թվականի հունիսի 23-ի N 01//04112-2025 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հաստատել՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Հովտաշեն գյուղում 03-055-0117-0006 կադաստրային ծածկագրով 0,498 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասից 0,05368 հա հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի:

2.Նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և Արտաշատ համայնքի Հովտաշեն բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 190-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂԻ Վ. ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑ 43/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,0794 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 90-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Արարատի մարզպետի 2025 թվականի մարտի 28-ի N 01//09197-2025 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Դիմիտրով գյուղի Վ. Մայակովսկու փողոց 43/3 հասցեում գտնվող՝ 03-038-0016-0006 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,0794 հա մակերեսով հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ առողջության առաջնային պահպանման բժշկական կենտրոն կառուցելու նպատակով:

2.Ուժը կորցրած ճանաչել Արտաշատ համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 16-ի «Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Դիմիտրով գյուղի Մայակովսկու փողոց 43/3 հասցեում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,084 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին» N 90-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 191-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԻ Ս.ԿԻՐՈՎԻ ՓՈՂՈՑ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգի 6-րդ կետով, 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով և ուսումնասիրելով Տ.Մանուկյանի 03/09/2025 թվականի թիվ Ք-11454 դիմումը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Շահումյան գյուղի Ս.Կիրովի փողոց 2/1 հասցեում գտնվող՝ 03-074-0081-0012 կադաստրային ծածկագրով 0,07674հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն ուղղակի վաճառքի կարգով օտարել Արտաշատ համայնքի Շահումյան գյուղի Ս.Կիրովի փողոց 2 հասցեում գտնվող, 03-074-0081-0011 կադաստրային ծածկագրով, 0,1հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր՝ Տիգրան Մանվելի Մանուկյանին (ծնված 27/07/1989 թվականին)՝ հողամասն ընդլայնելու նպատակով:

2.Հողամասի վաճառքի գինը սահմանել 3 000 000 /երեք միլիոն/ ՀՀ դրամ:

3.Օտարման գործընթացը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 192-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԼԱՅԵՐՏ ՄՀԵՐԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, ուսումնասիրելով Լ. Հովսեփյանի ներկայացուցիչ Գ. Եղիազարյանի 23/07/2025 թվականի N ՃՀԱ/238/25949-25 հայտը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Այգեստան գյուղում գտնվող, Լայերտ Մհերի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող 0,4723 հա մակերեսով, 03-011-0128-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության կորիզավոր, խաղող հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, իսկ գործառնական նշանակությունը փոփոխել՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմոց կառուցելու նպատակով:

2.Կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին դիմումատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 193-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԱՐԱՏ ՎԱՐԴԱՆԻ ՍԱՅԱԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, ուսումնասիրելով Ա. Սայադյանի ներկայացուցիչ Ս. Գրիգորյանի 15/08/2025 թվականի N ՃՀԱ/234/28442-25 հայտը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արաքսավան գյուղում գտնվող, Արարատ Վարդանի Սայադյանին սեփականության իրավունքով պատկանող 0,12624 հա մակերեսով, 03-016-0113-0010 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, իսկ գործառնական նշանակությունը փոփոխել՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ սառնարան և քարե պարիսպ կառուցելու նպատակով:

2.Կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին դիմումատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 194-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատարանի 2021 թվականի մայիսի 17-ի ՎԴ/2439/05/20 վճիռը, Էմիլ Պետրոսյանի 07.05.2025թ. Ք-5903 դիմումը համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի Մրգավան գյուղում գտնվող, Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, 03-061-0164-0003 կադաստրային ծածկագրով 0,0585 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի եղանակով օտարել Էմիլ Ջիվանի Պետրոսյանին (ծնված՝ 23.01.1989թ.):

2.Հողամասի օտարման գինը կազմում է 800000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

3.Օտարման գործընթացը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին դիմումատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 195-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ) ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 14[3]-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի 29 դեկտեմբերի N 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 22 դեկտեմբերի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Քաղցրաշեն բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ 2025 թվականի հուլիսի 10-ի թիվ 2/փ-228 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2025 թվականի հուլիսի 24-ի թիվ 01/04828-2025 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հաստատել՝ Արտաշատ համայնքի Քաղցրաշեն գյուղում գտնվող 03-097-0151-0022 կադաստրային ծածկագրով 0,0825հա մակերեսով արդյունաբերության,

ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը՝ դասելով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի:

2.Նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի գոտևորման նախագծում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 196-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՄԵՆ ԱԼԵՔՍԱՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, ուսումնասիրելով Ա. Բաղդասարյանի 15/08/2025 թվականի N ՃՀԱ/240/28437-25 հայտը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Ջրաշեն գյուղում գտնվող, Արմեն Ալեքսանի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող 0,05883 հա մակերեսով, 03-080-0106-0026 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, իսկ գործառնական նշանակությունը փոփոխել՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ սառնարանային տնտեսություն կառուցելու նպատակով:

2.Կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին դիմումատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 197-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երկրորդ հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2025 թվականի հոկտեմբերի 15 -ին, ժամը 11:00-ին:

2.Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի ավագանու նիստերի դահլիճում, հասցեն ք.Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց, թիվ 62:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 198-Ա)*

Ավագանու անդամներ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԲԱԲԱՅԱՆ

ՆԱՐԵԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԱՐԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՍՈՖԻԱ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍԱՅԱԴՅԱՆ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՆԻ ԱՋԱՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԱՇԻԿՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԴԵՐՄՈՅԱՆ

ԿԱՐԵՆ ՂԱՋԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Գոռ Նազարյանը _____